

կայն, այդ նոր օրէնքի տրամադրութեան համաձայն, հայերը կրնային Ռուսիոյ Ընկերութեան չծախել իրենց հում մետաքսը, այլ ուղղակի Անգլիա տանել եւ հոն վաճառել:

Հանուէյ կը գրէ թէ՛ «այս օրէնքը մեծապէս պիտի պաշտպանէ հայերը, որովհետեւ զանոնք կը քաջալերէ ոչ միայն մետաքսը Պարսկաստանէն Ռուսիա ներմուծելու կամ Հոլանտա փոխադրելու ուղղակի իրենց ի հաշիւ, կամ նոյնիսկ ուսաց ծախելու, այլ եւ այժմ անոնք կրնան ուղղակի Անգլիոյ մէջ սպառել եւ, հպատակութիւն ընդունելով, կրնան այսպէսով մետաքսնին թազաւորութեան (Անգլիոյ) մէջ ներմուծել իրենց իսկ հաշույն, ինչպէս որ անոնցմէ մէկն արգէն բրած է»:1)

Հետաքրքրական է, որ հայ առեւտրականները իրենց տոկունութեամբ ոչ միայն կրցան իրենց մրցակիցները հեռացնել իրենց հրապարակէն, այլ նաեւ անոնց երկիրն իսկ թափանցել:

«Ռուսաց արտաքին առեւտուրը կը բազմապէս կարմիր կաշիէ, կտակեղէններէ, բրդեղէն կերպասներէ եւ Եւրոպական արտադրութիւններէ (լաթեղէն) որ Պարսկաստան կ'արտածեն գլխաւորաբար հայոց հաշուին: Ատոր փոխարէն անոնք Պարսկաստանէն կը ներածեն տեղական քանի մը հիւսուածեղէններ, մասնաւորաբար Քաշանի (ղիպակներ), ինչպէս նաեւ ոսկեխառն մետաքսէ ծոպեր, լեհերու սպառման համար, բամպակով խառնուած գործուած մետաքսէ հիւսուածեղէններ, բրինձ, բամ-

պակ, քիչ քանակով դեղ եւ մասնաւորաբար հում մետաքս»:2)

1720-1723(3) տարիներուն Թուրքիայէն Անգլիա ներածուած հում մետաքսը տարեկան 206,000 խոշոր փառնա էր (24 աունսնոց): Սակայն, 1722-26-ին Թուրքիայէն Անգլիա ներածուած հում մետաքսը 1,472,491 փոքր փառնա էր (16 աունսնոց), որ հաւասար է 196,000 մեծ փառնաի (24 աունսնոց):

1737-էն 1741, սակայն, ներածումը սուր կերպով կ'իջնայ տարեկան 659,519 փոքր փառնաի, որ հաւասար է 88,336 մեծ փառնաի:

Գալով մետաքսի զինին՝ չափաւոր հաշուով մեծ փառնաիին կը վճարուէր 19 անգլիական շիլինգ(4), այսինքն՝ մօտաւորապէս 4.75 տոլար:

Հոս կուտամ Թուրքիայէն Անգլիա ներածուած հում մետաքսի տարեկան քանակին մէկ ցանկը.—

րուն չուկան, իսկ միւս կողմը Փորթուկալցիներուն չուկան: Այս ճեմելիքները (պազար) կը գտնուէին Royal-Exchange-ի մէջ, որուն «ներքեւ ճեմելիքը եւ հրապարակը բաժնուած էին քանի մը կայարաններու, կամ ճեմելեաց, ուր պատկան վաճառականները եւ անոնք, որ անոնց հետ գործ ունին, յատկապէս կը հաւաքուին: Այնպէս որ, որեւէ վաճառական կամ նաւապետ հեշտութեամբ կարելի է գտնէ հոն: Կը բաւէ, որ գիտցուի թէ ան ո՞ր երկրին հետ առեւտուր կ'ընէ»: (A Collection of Voyages and Travels.— Thomas Osborne.—London, 1745, Vol. I, էջ 119:

Հոս կը տրուի նաեւ յատկազօծը, ուր տեղ նշանակուած է Armenian Walk-ը: 1750-էն առաջ հայերը Անգլիոյ մէջ գլխաւորաբար գոհարեղէնի եւ գորգերու գործ կ'ընէին: 1750-էն վերջ միայն անոնք թոյլատրուեցան հում մետաքսի առեւտուրով զբաղիլ:

2) Անդ՝ էջ 85:

3) Տպագրութեան մէջ 1743, հուցէ վրիպակ:

4) Անդ՝ էջ 316:

1) Անդ՝ էջ 362-3: Հայերը վաղուց Անգլիոյ մէջ առեւտուրով զբաղած էին: Ժէ դարուն Մարտիրոս անունով հայ մը ընդունած էր անգլիական հպատակութիւն եւ առեւտուր կ'ընէր հոն: 1730-ին Լոնտոն այցելող սպանիացի ուղեգիր մը՝ Don Gonzales կը վկայէ, որ Հայոց չուկան կամ ճեմելիքը (walk) կը գտնուէր արեւելքէն՝ Smithin's Street-ի եւ հիւսիսէն՝ Threadneedle Street-ի միջեւ, մէկ կողմը ունենալով Հոլանտացոց ոսկերիչներ-